

ՓԱՆՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպեկ.
Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳԻՐԻՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՀԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՆԵՐԿԱՅ 1898 ԹԻՒ

ՄՇԱԿ

ԴՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԴՐՈՒ

«Մշակ» տարեկան գինը թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում 10 ռուբլի է, տան
և մէկ և տասն ամսվանը՝ 9 ռ., ինն և ութ ամսվանը՝ 8 ռ., եօթ ամսվանը՝ 7 ռ., վեց ամսվանը՝
6 ռ., հինգ ամսվանը՝ 5 ռ., չորս ամսվանը՝ 4 ռ., երեք ամսվանը՝ 3 ռ., երկու ամսվանը՝ 2 ռ., մի
ամսվանը՝ 1 ռուբլի:

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը (Բաղրամյան և Բարձրակայա փողոցն, անկիւն):
Ուրիշ քաղաքներից պէտք է գրել այս հասցեով. ТИФЛИСЪ, редакция „Мшакъ“, իսկ
արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal arménien „Mschak“.

Յայտարարութիւններ ընդունվում են թէ Տալին, թէ Նախիջևան և թէ օտար լեզուներով:

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

Ներկա խոշոր շարքը.—ՆԵՐԿԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.
Կուսակցութիւն և ամուսնացած հազարաւորութիւն.
Գծեր Բագրի առեւտրական կեանքից. Մատեն
նադրութիւն. Նամակ Նոր-Բայազէտից. Ներքին
լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Յաղթանակները
և յաղթանակները. Արտաքին լուրեր.—ԽԱՌԻՆ.
ԼՈՒՐԻՆ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՏԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ.
ՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նամակ Թիֆլիսից:

ՆԵՐԿԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Վերջին ժամանակներս լոյս տեսած եւ-
րոպական մի քանի խոշոր գիտնական աշ-
խատութիւնները մէջ ընդհանուր ուշա-
դրութիւն է գրաւել Քրիստոսական երկու
գիտնականների Բիւնէի և Ներիի գիրքը
ժամանակակից սերնդի մտաւոր յոգե-
նաճուղիէն հարցի մասին: Մտաւոր
յոգնածութիւնը և ներքինութիւնը, մեր
դարի այս ընտրող գծերը, այնքան մեծ
զարգացումն են ստացել, որ լուրջ վտանգ
են սպառնում մարդկութեան ապագային:
Եթէ չաջողվի արմատական միջոցներ ձեռք
առնել նրանց դէմ, ապագայ սերունդների
Ֆիզիքական և մտաւոր այլասեռումն ան-

խուսափելի կը դառնայ, որովհետեւ, ինչ-
պէս ցոյց են տալիս երկու գիտնականների
ուսումնասիրութիւնները, ներքինութիւնը
և մտաւոր յոգնածութիւնը ազդում են
մարդու ոչ միայն ֆիզիքական, այլ և մը-
տաւոր զարգացման վրա և ազդում են
ազեւտալի կերպով:

Բայց ինչից առաջ եկաւ մեր դարի ան-
օրինակ ներքինութիւնը և մտաւոր յոգնա-
ծութիւնը, ի՞նչն այնքան նպաստեց նրանց
հսկայական զարգացման: Առաջին հարցին
պատասխանում է զերմանացի պրօֆէսոր
Էրի աշխատութիւնը, որ Քրիստոսից եր-
կու գիտնականների աշխատութեան հետ
միասին առատ ներթ է մատակարարում
որոշ չափով լուծելու յարաբերութիւնը
ներքինութիւնն առաջ է եկել այն բազ-
մաթիւ նշանաւոր պատմական դէպքերից,
որոնք ցնցեցին մեր դարում մի շարք սե-
րունդների մտքերը: Ֆրանսիական մեծ յի-
ւափոխութիւնը, Նապոլէոնեան պատե-
րազմները, մտքերի շարժումը մեր դարի
կէսում, տեխնիկական գիտութիւնների հրա-
կայական զարգացումն, կեանքի կենցաղա-
վարութեան արմատական փոփոխութիւնը
շուրջ և երեք տարեկանութեան ազդեցու-

թեան տակ, գոյութեան կուլի ասպարէ-
զում արտայայտած սարսափելի եռանդը,
ազդանակութեան խոշոր կենտրոնների ա-
ճումն, կրօնի կուլը աճող նիւթապաշ-
տութեան դէմ, սօցիալական վարդապե-
տութիւնների տարածումն, կապիտալիզմի
և պրօլետարիայի ահագին զարգացումն
—այդ բոլոր խոր տպաւորութիւնն գոր-
ծեց մարդկանց ներքին սխտեմի վրա
և անընթեղ հետք թողեց: Դաւով այն
հարցին, թէ ներքինութիւնն ի՞նչ տեսակ
է տարածված հասարակական և ազգա-
գրական խմբերի մէջ, հետազոտութիւննե-
րն ապացուցանում են, որ, սովորաբար,
հասարակութեան բարձր դասակարգերը և
մտաւոր աշխատութեան ներկայացուցիչ-
ներն են տանջվում այդ ցաւով, իսկ ազ-
գագրական խմբերի վերաբերմամբ նա ա-
ւելի շատ տարածված է հրէաների և ա-
մերիկացիների մէջ: Առաջինները ամբողջ
դարեր յուզմունքներով լի կեանք և պատ-
մութիւն են ունեցել, իսկ ամերիկացիները
վարել են շարունակ տենդային կեանք
ոսկի ձեռք բերելու նպատակով:

Գալով մատուց սերնդի մտաւոր յոգնա-
ծութեան հարցին, Բիւնէ և Ների վճռակա-
նապէս յայտնում են, որ այդ մեծ չարիքի
պատճառը ժամանակակից դպրոցն ու կըր-
թական սխտեմն է, զիստաւարապէս գիմնա-
զիաներն ու համալսարաններն են: Ժամա-
նակակից դպրոցը յաջորդաբար տանում է
մատուց սերունդները դէպի այլասեռումն:
Այսօր ամեն ոք՝ մեծ թէ փոքր, հարուստ
թէ աղքատ, տղայ թէ աղջիկ ձգտում են
ուսում ստանալու: Մտոյնների միակ ձգ-
տումն է կրթութիւնն առաւ իրանց զաւակ-
ներին՝ զրգոված զանազան պատճառներից:
Այդ պատճառով բոլոր քաղաքակրթ եր-
կրներում դպրոցները լցված են աշակերտ-
ներով և ահագին քանակութեան շը-
նորհիւ՝ ուշադրութիւն է դարձվում ուս-
ման որակութեան, յատկութեան վրա:
Միջնակարգ դպրոցներից դուրս են դալիս
բոլորովին անպատրաստ պատանիներ, օ-

րիորդներ, որոնք անցնելով համալսարան,
չեն կարողանում, նոյն պատճառներով, որ
և է հիմնաւոր կրթութիւնն ստանալու: Ուս-
ման լայն պրօգրամները թէ՛ միջնակարգ և
թէ բարձր դպրոցներում, դպրոցի հակա-
ռոյջական պայմանները, օրէց, լոյսից զրկե-
ված նեղ դասարանները ոչ միայն յոգնե-
ցնում են ուսանողների շարունակ լարված
մտքերը, այլ և բոլորովին քայքայում են
նրանց ջղային սխտեմը:

Եւ որովհետեւ դպրոցն ինքն է հանդի-
սանում աղբիւր այդ բոլոր չարիքների, նա
ինքն էլ պէտք է լինի նրանց բժշկողը: Բի-
նէ և Ների եզրափակում են, որ այժմ
ինչպէր ոչ թէ մանկավարժութեան հին
սխտեմը բարեփոխելու մէջ է կայա-
նում, այլ նրա մէջ, որ պէտք է մշակել
բոլորովին նոր սխտեմ, և միանգամ ընդ-
միշտ դէն շարունակ հին սխտեմը, իբրեւ
անպէտք: Հին մանկավարժութիւնը, որով
այսօր ղեկավարվում է դպրոցը, հիմնված
է ամբողջովին հնու թեան կանխակալ
կարծիքների, հեղինակութիւնների և ըն-
թացիկ աֆօրիզմների վրա. նոր մանկա-
վարժութիւնը, որ կոչված է թարմացնելու
մարդկային միտքը, պէտք է հիմնվի դի-
տողութեան և փորձի վրա, այսինքն այն
սխտեմի վրա, որոնց վրա հիմնված է ամբողջ
ժամանակակից գիտութիւնը:

Եւ այսպէս նոր, արմատական դպրոցը
մի կողմից, իսկ սօցիալական կեանքի աւե-
րի արդար և խելացի կազմակերպութիւնը
միւս կողմից, — ահա՛ զօրեղ դարմանները
ներքինութեան և մտաւոր յոգնածու-
թեան դէմ:

ՆԵՐԿԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿՈՒՍԱԿՐՈՆ ԵՒ ԱՍՏՈՒՍԱՅԱԾ ՀՈԳԵՆՈՐԱ-
ԿԱՆՈՒԹԻՒՆ
(Նամակ խմբագրութեան)

«Մշակ» 136 և 137 համարներում կարդալով
պ. Լ. Սարգսեանի «Վերքը այժմ և առաջ» յո-

ձեաց ընդհանուր փոխանակութիւն
ընելով չեն ուզած, որ Աշգեհանի գիրքում ընէ
հրաժարականն ետ առնելու, վասն զի եթէ
պատրիարքը՝ չը մոլորեցնելով ծառանքի համա-
գումներին, ետ չառնէր իր հրաժարականը,
սովորաբար ինչպէս յայտնի է, պարտաւորում
պիտի տեսնէր զինքն ազգին ինդիքները կա-
տարելու, այն է՝ եկեղեցական առանձնաշնորհ-
մանց և նոյն առնելի համադրումը ժողովի յի-
շատակազմին, որ հարստահարութեանց ինդիքն
էր, բայց երբ ծառանքի բուռն յորդորներուն
վրա զիջում ըրեր է պատրիարքը, խառն ժողովն
այն առնել «գործողութեան լիակատար ազա-
տութիւնը» պատրիարքին թողլով՝ ցրուեց է,
այսինքն, «արեւն քի զլուսն քո» ըսել և առեւ
քաղել է: Եւ ան այն օրէն սկսեալ, Աշգեհան
բարոյապէս մեռաւ ազգին համար, և աղքատ
Աշգեհանի հեղափոխ մոլորութեան շնորհիւ, ին-
կաւ սոսկալի թշուառութեանց մէջ, որոնց պա-
կասը ընցուց Մաքսուտ Սիմոն և իր վարչու-
թիւնը: և սովորաբար այսպէս՝ աղուշ Աշգեհանի
թիւնը բռնելով, բուռն ինչ որ պէտք էր՝ այս
հաստակ ազգին արեւն ու լոյսն իսպառ խա-
ւարելու համար: Աւասիկ այս չարեաց պատ-
ճառն է ծառանքի. կը հաւատայ ատր արտասա-
մանի լրագրի նամակագիր պարոնն, եթէ ոչ,
թող բարեհաճի նոյն տարուայ «Էկզիլն» Հէրբլը
անդրակական թերթերն ալ աչքէ անցունել, ուր
պիտի տեսնէ, թէ ծառանք և միմյանի ծառան
Յարութիւն փաշա խառնում է հայկական
գործերուն և թէ զրպարտութիւն է հայկական
ամբաստանած հրապարակագրին դրածները սուր-
թանի այդ courtisan-ին նկատմամբ:

«Էկզիլն» Հէրբլը՝ 1890, սեպտեմբերի 5-ին
(Ն. Տ.) հետեւեալ կը հրատարակէր. «Վեհա-
փառ Սուլթանի հրամանները գործադրուելու և
հայոց պատրիարքարանի դուրս բերել գոհացու-

ազգային գործերու մօտէն ծանօթ մարդ, պէտք
չունէր ատոր, ինչպէս չունի նաեւ, կարծեմք,
այն prejugés-ն զիտելու համար պետական այդ
մարդուն այնպէս, ինչպէս որ էր պատրիարք
Ներսէս Վարժապետեանի ժամանակ:

Ազնի նամակագիրը, կամ այն թէ շատ
անընդունակ մարդ է, որ իր շուրջն անցած
դարձածէն բնաւ տեղեկութիւն չունի, և կամ,
աղատական թերթի մը մէջ այդպիսի նամակ մը
հրատարակելով՝ կը վանալ այդ պաշտականին
ձեռնարկները դիւրացնել եւրօպական աշխարհի
այն մասերուն մէջ, ուր որ պէտք է.—թէ այն-
պէս լինի, թէ այնպէս, մենք կը ցաւովմք պե-
տական այդ բարձր անձնաւորութեան վրա, որ
յիշեալ նամակագրին պէս ողորմելի պաշտպան
մը ունի և արդարութեան պարտք կը համա-
րեմք, ինչ որ է ճշմարտութիւնը, զայն գրելով,
ապառնել պ. նամակագիրը պարտաւոր աշխատու-
թենէ մը:

Աշգեհան պատրիարքը, 1890-ին, «Գուրպան-
պայրամի»-ի օրուան դէպքին վրա, երբ վերջ-
նապէս կը հրաժարէր իր պատրիարքական
Աթոռէն՝ միայն ծառանքի Յարութիւն փաշան
էր, որ կը համոզէր պատրիարքին ոչ ետ առ-
նու հրաժարականն՝ այն հաստատ խոստումնե-
րով, թէ սովորաբար պիտի կատարէ անպատճառ
իր ինդիքները:

Այս ըսածս հաստատուելու համար բաւական
կը համարեմ հետեւեալ՝ զոր «Արեւելք» հրատա-
րակած էր 1890 օգոստոս 20, 1977 թուով,
ծանօթացնել «Մշակ» ընթերցողաց: «Ուրբաթ
օրը—կրէ «Արեւելք»—Արթ. Տ. Յոհաննէս աւագ
քահանայ Սիրիան և քաղաքական ժողովոյ ա-
տենապետ Սահակ էֆենտի Ղազարոսեան Ս. Պատրիարք
Հօր կողմէ զի մը տարին արտա-
քին գործոց նախարարութեան խորհրդական
ճառեան վեհմ. Յարութիւն փաշային, որով

ՌԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿԱԳԻՐԵՐ ԵՒ ԴՐԱԿԱՆԱԿԱՆ

Կ. ՊՕԼԻՍ, յուլիսի 26-ին

Արտասահմանի հայոց մի լրագրի մէջ տեսնուե-
ցաւ մարաքաղաքէն ուղղեալ նամակ մը, զոր
իւրեք կողմերէն արտատպել նաեւ արտասահմանի
մէկ քանի հայ թերթեր:

Նամակագիրը կը մեղադրէ հայ ազատական
մամուլին հրապարակազրկներէն անոնց, որ
«Յարութիւն» փաշա ծառանքի նկարագրին ու-
նեցող մէկը՝ Նուբեհան և ընկ. նման մարդե-
րու հետ չփոխելու սխալը կը գործեն, և,
զրպարտութիւն կը համարի արեւու պէս
պայծառ ճշմարտութիւն մը, զոր հրապարակա-
գիր մը ի վեր հանած էր՝ բացատրելով, թէ
Յարութիւն փաշա, վախճանեալ Յակոբ փաշա և
Տէր-Մկրեան՝ միմեկի պատճառներն եղած են՝
ազգին զլխուն եկած շատ փորձանքներուն
խորհուրդ տալով Աշգեհանի, որ չի հրաժարի
պատրիարքութենէն:

Խօսող լաւատես այդ նամակագիրը, չեմ գի-
տեր որ ապացոյցներու վրա հիմնուելով, կը
վտահեցնէր արտասահմանեան թերթի խմբագիր
պ. Մ. Չերազին, առարկելով, թէ «Այդ նշանաւոր
պետական մարդը երբեք խառնուած չէ հայկական
գործերուն Աշգեհան պատրիարքին ժամանակ,
վասն զի նա չէ կրցել իրեն համակրութիւն
ներշնչել: Ահաւասիկ ամենախոշոր և պոչաւոր
ուսու մը, զոր ընթացիկ ժամանակիս մէջ,
սովորական քաղաքականութեան diarrhée-էն
բռնուող մը միայն կարող է կլլել, և յիշեալ լրա-
գրի խմբագիրը՝ պ. Չերազ իբրեւ քաղաքագէտ և

հն պարտեցնում, թէ այս ինչ ֆերման ծախում է իր նախնանքը, այսինքն է գնահատում և այլն և այլն: Այսպիսի դալվալեցուցիչ միջոցներ, այնպիսի արժեքներ, որ նայն իսկ նրանք, որոնք երբեք մտքներով չէին անցկացրել, թէ երբ և ինչ կարող են վաճառել իրանց նախնանքները, — նրանք ևս սկսում են տատանվել: սկսում են ծախելու մասին մտածել... Հեշտ և շուտ հարուստացող մի կատարի տեղանք կրծում է քորո-նայրականներին սիրտը, գիշեր-ցերեկ հանգստու-թիւն չէ տալիս նրանց: Անդրիայից և ուրիշ տե-ղերից տեղում են միջնորդներ և զանազան յայտնի ու անյայտ ֆերմաների ներկայացուցիչ-ներ: Զէ հասկացվում, թէ ով է իսկական կապի-տալիստների ներկայացուցիչը, ով է միջնորդը: Ամեն մի եկուր իրան ներկայացուցիչ է հրատա-րակում այս ինչ, կամ այն ինչ ֆերմայի, դե-մոստրացիայի է անում, չը լաված գներ առաջար-կում, մտքեր պարտադրում: Մի քանի դեպերից յետոյ միայն պարզվեց, որ իրերի դուրսիցը այն չէ, ինչ ճշմոտ են ներկայացնել բազմա-լեզուի քորոնայականները: սակայն փաստը փաստ է մնաց: Տեղադրված առևտուրն իր դադարի մե-կտիւն հասաւ:

Անդրիայից են եկել, թանգ գներով հողեր, կալուածներ են տալիս: ասելով, ամենքը սկը-նեցին հողի ետեղից ընկնել: Անդրիայիցների ա-նունից յորդորված տեղացի թուրք, հայ, առե-տըական, արհեստագործ, գործակալաւոր, մասնա-դէմներ՝ փաստաբան, բժիշկ, ինժեներ և այլն սկսեցին միմեանց ձեռքից խել, մէկ մէկուց յափառակից հողեր կրկնապատիկ, եռապատիկ, տասնապատիկ բարձրացնելով գները: Սպեկուլա-ցիան անսպասելի ծաւալ ընդունեց: Մարդ չը մնաց, որ չը թափախվէր, չը մասնակցէր այս կամ այն կերպով կատարվող սպեկուլացիաների մէջ... Մի կարծ ժամանակամիջոցում այնպիսի փոփոխութիւններ տեղի ունեցան, որ անկարելի էր նախատեսել, կամ գէթ մի վայրկեան՝ են-նիներ: Մի մարդ, որ մի ամիս առաջ կօպէկ-չուէր, այսօր հազարներ տէր է դարձել: Մի գործակալաւոր, որ ամսական 60 ռուբլի փող էր ստանում, տասնեակ հազարների չըլդարած է անում: Այդ օրոքից, ինչպէս, ինչ հրաշքով: Մարդիկ կապիտալ չունեն՝ առևտրական չըլա-ղարձներ են կատարում. փող չունեն՝ գործերի են ձեռնարկում, մեծ մեծ վաստակների տէր դառ-նում: Եւ այն էլ ոչ թէ տարիների ընթացքում, այլ քաղցնեցի, ժամերի, օրերի ընթացքում: Միջնորդների մէջ տարօրինակ լուրեր են պտըտ-վում, անսպասելի նորութիւններ լսվում: Քիա-նիէլ Քրիզոստիդ այսօր 5,000 ռուբլի փող է աշ-խատել. Ստեփան Համարձուկիչը երեք օր ա-ռաջ 10,000 ռուբլիով մի տուն է առել, այսօր 15,000 ռուբլի օգուտ են տալիս, յետ չէ կանգ-նում: Նիկիտ Ալեքսիով մի ժամկայ մէջ հինգ ղեկեռատին հող է գնել—առանց մի կօպէկի— և իսկոյն և եթ մի ուրիշին ծախել 2,000 ռուբլի վաստակ ստացել և այլն և այլն: Ամեն մի քայլում, ամեն մի անկումում՝ յետին հրաշա-րակից սկսած մինչև բոլորայի չուրջը, հասարա-կաց պղծին, ժողովարանը, ուրիշ խօսք, ուրիշ նորութիւն չէր լսի: Այդ տեսակ դէպքերի, գոր-ծարարութիւնների, ծարպիկ ձեռնարկութիւնների պատմութիւններ են, որ տեղի են ունենում, ակործանով պատմվում և մեծ ակործանով էլ լսվում են...

Մինչև այժմ ով առեւ-ծախել է՝ անպայման վաստակ է ունեցել, ոչ ոք դեռ չի տես չէ կրել: Բայց թէ ինչ կը լինի այսուհետեւ,—այդ հարց է, որ դժուար է լուծել: Գնած հողերում նախ կը լինի, թէ չէ, հաստատ ոչինչ յայտնի չէ: Վիճելի հողերը, որ նոյնպէս ծախված են, յօգուտ ծա-խողի կը վճարի թէ չէ, այդ նոյնպէս կասկածե-լի է... Մի խօսքով մի դրութիւն, որ բաւականին խախտու հողի վրա է կանգնած: Հազարաւոր մարդիկ կան, որ անպայման գումարներ են մտցը-րել հողի առևտուրի մէջ: ոչ սպեկուլացիայի դե-տաւորութեամբ, այլ պահելու նպատակով: Դը-բանք անպայման ընկնի են մասնակած. այն տեղե-րում, որտեղ դրանք հող ունեն, եթէ նախ ի-նչոյդ երևաց՝ մեծ անդուլթեան պիտի հանդիպեն, և հակառակ դէպքում՝ եթէ նախ չերևաց, այն ժամանակ ինչ է նրանց սպասում, եթէ ոչ ան-խուսալիքի սնանկութիւն... Եւ այս կատարի մրցութեան մէջ մասնակից է նաև ինտելիգենտ դասակարգը: Հարկաւոր համալսարանաւորու-նեք, մասնագէտներ նոյնպէս խաբաւում են այդ տեղադրված իրարանցում մէջ: Տեսնե՞ք զը-բանք ինչպէս են պահում իրանց, ինչ դեր են կատարում քաղցնեցի, ժամերով հարստացաւ: մեծ տեղանքի շաղի վրա:

Ն. Կալթան

Մ Ա Տ Ե Ն Ա Գ Ի Ր Ո Ի Թ Ի Ի Ն
Նորեկ, վէպ Գ. Բաբկինցի, Թիֆլիս 1897.

Մի ծերունու, պաշտօնավոր պոզիտիւնի 0-վանէս աղայի որդին՝ Ալեքսանդրը, աւարտելով իր ուսումնա համալսարանում, որոշում է իր ուսումը ծառայեցնել ժողովրդի օգտին և իրը ասպարէզ աղայի որդուն հանձնում, նա ընտ-րում է ոստիկանական ծառայութիւնը. նա ճըղ-տում է պրիստավի պաշտօն ստանալ իր գա-ւառում, ուր խառն ապրում են հայեր, թուր-քեր և քրիզներ, և ստանում է համալսարանա-կան պրիստավը, ի հարկէ, կաշառակեր չէ, բայց նա անփորձ է. նա առաջուց չէ կշռել այն անյաղթելի արգելքները, որոնք մեր խուլ գաւառներում դուրս են գալիս ամեն մի փոք-րի շատէ ազնիւ, շիտակ գործողի դէմ, մասնա-ւանդ եթէ այդ գործողը պաշտօնեայ է և չէ կամենում համակերպվել տիրող կարգերին ու աչք փակել դեղձումների առաջ: Վստահ իր դիպրով և իր բարի գիտատրութիւնների վրա, նա եռանդով գործի է կապում. նա կամենում է ցոյց տալ, թէ ինչ անպիսի գործ կարող է կա-տարել գաւառում մի ազնիւ, շիտակ և անկա-շառ պրիստավ: Վերջապրութիւնն ինքն ըստ ինքեան յայտնի է. արգելքներ, մեքենայութիւն-ներ զանազան կողմերից, մի փոքր սիրահարա-կան դէպք էլ մի կողմից, շուտով ընկնում են համալսարանական երիտասարդին, և նա յու-ռահատվում է, յուսահատվում է մինչև այն ա-տիճան, որ կամենում է ինքնասպանութիւն գործել, բայց... որոշում է արել, մնալ կեն-դանի մեռեալ և... շատ շուտով թողնելով Վովկայի, անցնում է թիւրքաց Հայաստան...

Անս այն գրեւծով բովանդակութիւնը, որ հեղինակն անուանել է վէպ: Գրքի դե-թէ երեք քառորդ մասը նուիրված է գիւ-ղական կեանքի, մասնաւոր թիւրք և քրիզ-ժողովրդի աշխարհայեցողութեան, սովորութիւն-ների, աւանդութիւնների, տիրող վարչական կարգերի, ազգաբնակչան պայմանների նկարա-գրութեան: Եւ պէտք է ասել, որ հեղինակը շատ մօտ ծանօթ է երևում գաւառական կեանքին և այդ պայմաններին և այդ տեսակետից շատ բարեխիղճ ուսումնասիրող է: Բայց նա բոլորու-վին դուր է անուանել իր այդ ուսումնասիրու-թիւնը վէպ, որովհետև իրը և վէպ, «նորակը» միանգամայն չէ դիմանում կրիտիկայի, զուրկ է գեղարուեստական որ և է արժէքից, «Մուրճ» մէջ տպվող բաղմամբի վէպերի նման (այս դը-րուածքն էլ արտասովոր է այդ ամսագրին): Նոյն իսկ վէպի հերոսը, միակ տիպը, որի վրա հեղինակը թափել է իր բոլոր ջանքերը, դուրս է եկել վերին աստիճանի գունատ, թուլ և մանկական տպաւորութիւն է թողնում: Իսկ լեզուն... լեզուն ճօ անտանելի է և կատարելա-պէս յիշատակ է «Մուրճ» Հարկաւոր օրի-նակներից մի երկուսը բերե՞ք. «Քորոնայից մի ձիանց ընդհանուր անկումը, քաղաքային առօրեայ անհրաժեշտ հարցերի լուծումն չըս-տանալը, զանազան տարաբնուի չիւանդութիւն-ները և բազմաթիւ մահվան դէպքերը, ժողովր-դի մեծամասնութեան սուղ ու չիվանը և այլ այսպիսի դառն հանգամանքներ, պակաս բաներ չեն հասարակութեան սիրտը կտորելու համար: Եւ անս այդ տեսակետից ժողովուրդն ընկած է մի տեսակ տարօրինակ, տխուր տպաւորութեան տակ:

Բայց դրանից կան ուրիշ հանգամանքներ ևս: Անցեալ տարիներում ամուլայ սեղանին այս-տեղ գալիս էին բազմաթիւ ինտելիգենտ երի-տասարդներ, ուսուցիչներ, ուսանողներ, մի խօսքով ինտելիգենցիայի որոշ գաղափար, որը զանազան հասարակական խնդիրներ, պարե-րեկցութիւն սարքելով և թատրոնական ներկա-յացումներ տալով՝ հասարակութեանը ուրախ տրամադրութիւն էր ներշնչում: Իսկ այս տարի կան, որոնք միայն գիտաւոր աստղի նման են երևում քաղաքի հորիզոնի վրա: Ինչ պահանջը

այդ երկու զոյգ մի կենտ ինտելիգենցիայից, որը կապ չունի հասարակական գործունէութեան հետ: Աւելացնենք, որ տեղական ժողովուրդն այն ժամանակ է միայն լի հաւատով վերաբեր-վում երիտասարդութեան և աւելի մօտիկից յա-րաբերութիւն սկսում, երբ նրա կողմից մի շո-շափելի գործ է տեսնում: Այսպէս թէ անպէս՝ հասարակական կեանքն այժմ մեռած պէտք է համարել Նոր-Բայազէտում:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Արդարադատութեան միջնորդը հարցրել է կովկասեան բոլոր նահանգական դատարանների նախագահների և պրիստորների կարծիք՝ Կով-կասում եր զ ու ե ա շ ն եր ի դ ա տ ա ր ա ն մ ո յ ց - ն ե ու մ ա ի ն: Նրանցից շատերը, եթէ միայն հաւատանք «КАБАЗ» լրագրին, յայտնի են, որ վաղածամ է Կովկասում երդուեալների դատա-րան մտցնելը, հիմք բռնելով այն, որ «երկրի բազմացել ժողովուրդը դեռ դարգացման ստոր աստիճանի վրա է կանգնած»?

Տեղական ուսու լրագրները լսել են, որ Կով-կասեան կառավարչապետ Մովսիսից վերա-դառնալուց յետոյ՝ պէտք է ճանապարհորդի Կովկասի մի քանի կողմերը:

Այս տարի Մովսիսի համալսարանը մտնելու համար, ինչպէս հաղորդում են մայրաքաղաքի լրագրները, խնդրել են տեղե աւելի քան 900 հոգի:

Ժողովրդական լուսաւորութեան միջնորդու-թիւնը, ինչպէս հաղորդում է «Новое Время» լրագրից, հաստատեց Բագուում բացվող մահմե-դական իրական գիշերօթիկ դպրոցի կանոնադրու-թիւնը: Իր տիպով այդ դպրոցը առաջինն է Ռուսաստանում. նա պէտք է անուանվի «Թա-գուսի Կայսրուհի Ալեքսանդրա Ֆեոդորովնայի անունի» Բագուի ուսումնական կենտրոնի իրական դպրոց: Դպրոցը կենթարկվի կովկասեան ու-սումնաբանական չըլանի հոգաբարձու իրաւա-ստութեան. նրա նպատակն է սկզբնական կըը-թիւնը տալ մուսուլման աղիւնիներին, որոնք գիշերօթիկ կը լինեն. ձեռագործի ուսումը յար-մարեցրած կը լինի մուսուլման ընտանիքի պա-հանջներին: Ռուսաց և թուրք լեզուների, մու-սուլման կրօնի դասատուները, ինչպէս և դպրո-ցի դիւսաւոր ուսուցչուհին պէտք է մահմետա-կաններ լինեն: Դպրոցն ապահովված է 150,000 ռուբլի գրամագլխով, որ նուիրել է դրամատէր Թաղիէվը:

Ինչպէս յայտնի է, համալսարանն ընդունող հեղինակների թիւը սահմանափակված է. նրանք կարող են կազմել ուսանողների ընդհանուր թիւի 10 տոկոս միայն: Ի հկատի ունենալով, որ այդ թիւը բոլորովին չէ համապատասխանում հրէայ երիտասարդների այն բուռն ձգտման, որ նրանք ցոյց են տալիս բարձրագոյն դպրոց մտնելու գործում, Օղեստի համալսարանը դիմել է ժո-ղովրդական լուսաւորութեան միջնորդութեան, խնդրելով 10 տոկոսը դարձնել 25 տոկոս:

ՂԱՐԱՍՈՒՐ-ԲԱԶԱՐԻՑԻՑ մեղ գրում են. «Յուլիս ամսին մեր քաղաքն այցելեցին երկու հայ դե-րասաններ՝ պ. պ. Կարինեան և Թարազեան: Առաջին ներկայացումը տուեցին ամսի 16-ին և խաղացին «Օտելլոյից» մի տեսարան և «Աւա-ղանիկից» մի տեսարան: Մուտքի կողմից այս ներկայացումը շատ անաշուղ էր. իսկ ինչ վերաբը-րում է դերասանների խաղին, այդ՝ էլ աւելի անա-շուղ էր: Հասարակութեան համար էլ խաղն անհա-կանալի էր, որովհետև այդպիսի պիեսներից մի մի տեսարան բեմ դուրս բերել գաւառական յետ ընկած քաղաքներում՝ անհասկանալի բան է, մասնաւոր ուր դերասանների ոյժից էլ շատ բարձր էր: Ներկորդ ներկայացումը տուին նոյն ամսի 23-ին՝ տեղացի մի քանի սիրողների մա-նակցութեամբ. խաղացին «Սուտ ճգնաւոր» և «Բանաստեղծ»։ Այս ներկայացման մուտքն աւե-հ համարել, քանի որ պիեսների բովանդակութիւ-նը պարզ, հասկանալի լինելով՝ հասարակութեան մեծ բաւականութիւն պատճառեցին: Ներկորդ ներկայացումը տուեցին յուլիսի 28-ին ուսուց-չելուով: Սիրողներից իր խաղով աչքի էր ընկ-նում Յ. Մուրադեան: Լուսմ ենք, որ տեղացի մի խումբ երիտասարդներ մտալի են ձմեռվայ ընթացքում հայերէն լեզուով, բարեգործական նպատակով, մի քանի ներկայացումներ տա-լիս կանգնում ենք քաղաքիս:

ՆՈՐ-ԲԱԶԱՐԻՑԻՑ մեղ գրում են. «Քաղաքի և գիւղերի վաշխառուներից երկուսին դատարա-

նը մեղաւոր գտնելով՝ դատաւարտեց մի քանի ամիս բանտարկութեան: Վաշխառուները այս կողմ, այն կողմ են ընկել և ամեն միջոց գործ են դնում, որ նահանգական դատարանում ար-դարանան: Տեսնենք»:

ԲԱԹՈՒՄԻՑ մեղ գրում են. «Վերջին ժամա-նակներս՝ հայրենիք վերադառնալու նպատակով՝ շատ գաղթականներ Բաթում են գալիս, յոյս ունենալով այստեղ դրամական նպաստ ստա-նալ: Տարաբախտաբար Բարեգործական ընկե-րութեան ձեռքը, որ դիւսաւոր օգնողն է այդ գործում, համարեա բոլորովին միջոց չունի գաղթականների խնդիրին լիութիւն տալու: Անհրաժեշտ է, որ այդ հանգամանքը ի նկատի ունենան այն գաղթականները, որոնք մեծ յոյ-սերով Բաթում են գալիս»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՅԱՂՈՂՆԵՐԸ ԵՒ ՅԱՂՎԱՍՏՆԵՐԸ

Բանից դուրս է գալիս, որ դժուարութիւնը այնքան պատերազմը չէ, որ վերջ տուեց ամերիկո-սպանիական պայքարին, որքան պատերազմից ա-ռաջ եկած հեռանկարները: Այժմ Ամերիկան ա-հալին գործեր պիտի կատարէ. կարգ ու կանոն հաստատել այն երկրներում, որտեղից պիտի հեռանան սպանիացիները, համեմատաբար հեշտ բան է: Հարցն այն է՝ արդեօք Ամերիկան պի-տի գոհացնէ տեղացիներին թէ ոչ: Կուրայի ա-պստամբները երբէք պաշտօնապէս չեն յայտա-բարել թէ անպայման կը հնազանդվեն Միա-ցեալ-Նահանգներին՝ տալով նրանց ազատու-թիւն վերականգնել կարգը: Այժմ Բնչ դիւր կը բռնեն նրանք. արդեօք չեն դիմադրի ամերիկա-կան հովանաւորութեան, որ պիտի տարածվի կղզու վրա: Ամերիկան, ինչպէս երևում է, վըճ-ուել է միանգամայն եւեթ կատարել անկախու-թիւն չը տալ կղզուին. գոնէ յայտնի է, որ ամե-րիկական զինեալ Լի, որ մինչև պատերազմը հիւպատոս էր Հավանայում, պիտի նշանակվի Կուրայի զինուորական նահանգապետ: Ինչ կա-ռեն սպստամբները: Պակաս դժուարութիւն չէ ներկայացնում Ֆիլիպիններն հարցը: Ամերիկա-յում շատերն են պահանջում, որ այդ կղզիները ձեռքից չը տալ Ամերիկան: Միջնորդներից եր-կուսն էլ այդ կարծիքն են և դրանցից մէկը նշանակված է անդամ այն յանձնաժողովի, որ պիտի մշակէ հաշտութեան պայմանները: Կա-թոլիկ հոգեւորականութիւնն էլ, որ Ամերիկայում բաւական ազդեցութիւն ունի, նոյնպէս քարո-ղում է այն միտքը, որ Ֆիլիպիններն կղզիները պէտք է միացնել Ամերիկային: Բայց Ազգայնա-լ-զօ, ինչպէս յայտնի է, իրան դիմաւոր է հրու-չակել և իր կողմն ունի ամբողջ տեղական ազ-դարնակութիւնը: Նրան լեզուներու համար պէտք է ափ իջեցնել մի անաղին բանակ և կանոնա-ւոր պատերազմ սկսել: Ինչպէս դուրս գալ այդ դժուարութիւնից...

Այսպէս է յաղորդելի դրութիւնը: Իսկ յաղթ-վածները... Սպանիայի բոլոր թշուառութիւն-ների վրա աւելացան և այն, որ հաշտութեան պայմանների համաձայն Ամերիկան իր վրա չէ անում Կուրայի պարտը, որի քանակութիւնն է 300 միլիոն դոլար: Սպանիան պիտի իր վրա վերցնէ այդ անպիսի դրամարը. բայց դրանից նա շատ մեծ թօշակ պիտի տալ իր այն անթիւ պաշտօնեաներին, որոնք ծառայում էին Կուրա-յում, Պորտո-Րիկոյում և միւս կղզիներում և ու-րոնք այժմ անգործ պիտի մնան: Դրութիւնը կատարելապէս յուսահատական է և Սպանիան կամայ ակամայ պիտի դիմէ մի պետութեան և իր ցաւերի դարման խնդրէ նրանից՝ ընդունեա-լով ամեն տեսակ ծանր պայմաններ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Մինչդեռ Գերմանիայում քարձք քաղաքա-կան» նշանակութիւն են տալիս Վիլհելմ կայսրի ճանապարհորդութեան Պալատինում, Աւստրիա-յում և Ֆրանսիայում՝ դժգոհութեան նշանները ուստականում են: Վերջական մասովը շատ զայ-րացած է, որ Գերմանիայում մուսանում են, թէ աւստրիական կայսրը իր տիրողներին թուամ կրում է և «Թագաւոր Նրուսաղէմի» տիրողը, իսկ Ֆրանսիան դժգոհ է այն պատճառով, որ այդ ճանապարհորդութեան ժամանակ զգեցմա-նական կայսրութեան մեծութիւնը պէտք է ա-րեւելեան ազդերի աչքին ընկնի»:

—Անգլիական մամուլի պատերազմախրական եւանդը չէ դադարում: Այժմ արդեն պարզ է, ասում է «Globe» լրագիրը, որ Ռուսաստանի քաղաքականութեան նպատակն է ղեկավարել Չինաստանը և նրա վաճառականութեան՝ Անգ-լիայի շահերին վնասակար ուղղութիւն տալ: Այդպիսի յաւակնութիւններն կարելի է վերջ դնել միայն մի եղանակով. պէտք է ստիպել Ռուսաստանին բացատրել իր միտքը: Եթէ—

ինչպէս մենք կարծում ենք—նրան լուռ պաշտօնական փորձով, այն ժամանակ մենք կը մանանք, թէ ինչպէս պէտք է վարվելը։

—Վիեննայից հեռագրում են օգոստոսի 6-ից. «Ֆրանց-Յոսէփ կայսրի ծննդեան դարեղարձի տօնակարգութիւնը կատարվում է հանդիսաւոր կերպով։ Գաղափար չքեղ զարդարված է. լրագրները նուիրում են համակրական յօդուածներ տօնակարգութեան։

—Սերբիայում հրատարակվեց մի քոչիւր «Երկու օտարական» վերնադրով, որ տարածվում է երկրի մէջ հայաբաւոր օրինակներով։ Այդ քոչիւրը հրատարակում է սերբերին դուրս բերել երկրից նախկին թագաւոր Միլանին, որ ծագումով բոսնիէն է և նրա առաջին մինիստր Գեորգիեւիչին, որ յայն է։ Քոչիւրի մէջ սաստիկ յարձակումներ կան Օբրինովիչներին տոհմի վրա։

—Լեոն XIII պապի հիւանդութիւնը ըստ երկու լրագրի, այնքան լուրջ ընտանոցութիւն ունի, որ, ինչպէս հայտնի է, նա զերմանական լրագրներին, կարդինալներին ժողովը արդէն սկսել է եռանդուն և զգուշիկ գործունէութիւն. նոր պապ ընտրելու համար։ Առ այժմ երկու թեկնածուներ կան. պապի քաղաքական կարգիչ Ռամպոլլա և կարդինալ Սիմպլիսիոս։ Ռամպոլլայի թեկնածութիւնը չեղանկատ պաշտպանում են եզրուիւնները և ֆրանսիական, բայց դա հակառակ է այն աւանդական կարգին, որով մինչև այժմ նոր պապ ընտրվում էր մեռած պապի հակառակ բանակից։ Երկուսից որն էլ ընտրվի, խաղաղական կառավարութիւնը դա՛ չը պիտի մնայ. երկուսն էլ պատկանում են այն կուսակցութեան, որ չէ հաշտվում Բոսնիայի հետ։

—Ռուսաց կայսերական «Штабарт» նաւը նորերումս անցաւ Կ. Պոլսի առաջով։ Սուլթանը նուիրեց այդ նաւին մի թանկագին ժամանակակից սրահները զարդարված են հիանալի աղանդականութեամբ, նայնպէս և մի շատ թանկագին մետաքսեայ արեւելեան գորգ։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Օգոստոսի 3-ին Գուբիւնում տեղի ունեցաւ այն արձանի հիմնարկութիւնը, որ իրանդական ազգի կանգնեցնում է Վոլֆ Տօմին, 1798 թ. իրանական ապստամբութեան պարագլխին։ Հանդէսն առիթ տուցւոյ այնպիսի հակադասական ցոյցերի, որոնց նմանը Գուբիւն քաղաքը երբեք չէ տեսել և որոնց մասնակցում էին իրանական բոլոր կուսակցութիւնները։ Իրանդիայի զանազան կողմերից հասնում էին թանկագին Գուբիւն. ամեն մի քաղաք ուղարկել էր իր նուագախումբը և իր պատգամաւորութիւնը զրօշակներով. եկել էին արտասահմանից ևս իրանական պատգամաւորութիւններ։ Դէպի արձանը գնացող թափօրի վեհօրէնները և ժողովրդի ոգևորութիւնն անկարագրելի է։ Ամբողջ ճանապարհը զարդարված էր զրօշակներով, որոնց մէջ բազմաթիւ էին ֆրանսական և ամերիկական զրօշակներ։ Սրտատանկեցին բազմաթիւ ճառեր, դրանցից յետոյ ժողովը կայացրեց մի որոշում, որի մէջ ասված է. «Իրանական ցեղի բոլոր քաղաքական կուսակցութիւնների, դաւանութիւնների և դասակարգերի ներկայացուցիչները՝ հաշվելով և Աւստրալիա, Ամերիկա և Աֆրիկա արջուրով իրանդացիներին, յայտնում են իրանց անկողնի որդւոյն՝ անդադար չարտնական կոչելը աղաւթութեան համար, որ կտակել են իրանց 1798 թ.ի հերոսներն ու նահապետները»։

Նապոնեան պատերազմում է Պարիզի աշխարհադէսի համար մի վեցանկիւնի տուճ, ամբողջովին չլինում յարձանակաւոր։ Նրա կշիւը՝ 3500 պուլ է։

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՅ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

ԱՄԵՐԻԿԱ-ՍՊԱՆԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

ՄԱՆԻԼԻՍ, 13 օգոստոսի։ Օգոստոսի 4-ին յայտարարվեց հայտնութիւն կնքելու մասին։ Ամերիկացիները առաջարկեցին ապստամբներին յետ քաշվել իրանց նախկին դիրքերը, որպէս զի նրանց և քաղաքի մէջ չէր ընդ հող մնայ։

ՆԻՒԵՐՈՒ, 13 օգոստոսի։ «Herald» հաղորդում է. Մակ-Կլինդի տուեց հայտնութիւն կնքելու համար կազմված մասնաժողովին հրահանգ՝ պահանջել Լիւսոն կղզին Միացեալ-Նահանգներին համար։

ՄԱԴՐԻԴ, 13 օգոստոսի։ Թագուհի-ինամահալային ստորագրեց հրաման, որով օգոստոսի 24-ին հրաւիրվում են կորտեսները։

ԲՕՄԲԵՅ, 13 օգոստոսի։ Անցեալ շաբաթ Բոմբէյում ժամտախաղի մեծան 162 հոգի։ Պաշտօնապէս յայտնում են, որ ժամտախաղ երկաց նաև հարաւային Հնդկաստանում։

ԲԷԼԳՐԱԿ, 13 օգոստոսի։ Վաւախից դատարանը հաստատեց այն վճիւրը, որով Պաշիչ դատարարոված է բանտարկութեան 9 ամսով։

Նախկին թագաւոր Միլանին վերադարձը հասցնելու համար։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 13 օգոստոսի։ Հրատարակված է Բարձրագոյն Ուկրա՛ Բարձրագոյն պարգևներ ինդրելու նոր կանոնների մասին։

ԽՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՅԱՅՏՆՈՒՄ Է

ԴԱՐԱՆԱԳԵԱՋ. Լիւարիւր Նաղարեանց. Դուք ինչպիսի էք յայտնել, որ բժ. Ջախարովի մասին տպված լուրի հեղինակը դուք չէք, ինչպէս կարծում են ոմանք։ Մենք այդ վկայում ենք, և մի և նոյն ժամանակ զարմանք ենք յայտնում, որ դեռ անգլան բուռն է ինքնակրկնների անձնատրուքիւնը որոնելու ձգտումը...

ՍԱԼՄԱՍՍ. Արգ. Միթէլ դուք կարծում էք, որ մեզանից է կարկած հանգանակութիւնը բանալ։ Դրա համար հարկաւոր է յատուկ թուղտութիւն։ Մենք չենք կարծում, որ այդ պայմանները ձեզ յայտնի չեն։

ԲԱԳՈՒ. Ա. Խ. Ձեր ինչպիսի գրքերն ստանալու համար՝ ճանապարհածախս չը պէտք է վճարել։

ՌԱՇՏ. Առաքել Առաքելեան. Թէ՛հրանից ստացած և մեզ ուղարկած նամակի մէջ՝ փող չը կար։ Միթէլ չը գիտէր, որ հասարակ ծրարով չէ կարելի փող ուղարկել։ Ուրեմն գրքերը չեն ուղարկվի ձեզ, մինչև նոր կարգադրութիւն չանէր փողի մասին։

ԽՈՐԱԳՐԻ՝ ԱԼԷԳՍԱՆԴՐ ԳԱԼԱՆԹԱՐ Հրատարակչ՝ ԱՆԻԿԵԱՍ ԱՐԹՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱԴՈՐ ՀԻՄԱՆՈՒՆՈՑ Բ. ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆԻ

(Կուկիա, Վորոնցովի արձանի հանդէպ) Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՌՈՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆ—11—12 ժ. վերաբուժութեան, վնասակար (սիֆիլիս) և միդասեռ. 5. Կ. Մ. ՉԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և ներարկային 5.

Ձ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—11½—12 ժ. կանանց հիւանդ.

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայից 5.

Ա. Գ. ԳՈՐԻԿՈ—12—1 ժ. ներքին, և միատեսական 5. ականջի, կոկորդի և քիթի 5.

ԵՐԵՎԱՆԵՐԸ

Վ. Մ. ՄԱԽՈՎԻԼԱՅԷ—6—7 ժ. ներքին և երեխայից 5. ներարկային և մորթի 5.

Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆ—6½—7 ժ.

Տ. Ի. ՐՈՒԿԵՆԿՈ հիւանդանոցումը քիմիական և խոշորացուցական հետազոտութիւններ է առնում մէլի, խիլի, արեան, կաթի և այլն։ Վճար 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոմիտեի) և օպերայիայի համար առանձին Հիւանդանոցի վերահսկում է 9—150 Թժկապետ ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆ

ԱՆԴՐԿՈՎԱԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒԴԻ

Մ ա ռ դ ա տ ա ռ Ն 6 զննչքը դուրս է գալիս ԲԱԳՈՒՆԻՑ գէպի ԹԻՖԼԻՍ ցերեկայ 4 ժամին և 5 րոպէին Թ Ե Ֆ Լ Ե Ս է հանում առաւօտեան 8 ժամ 26 րոպէին։ Դուրս է գալիս ԹԻՖԼԻՍԻՑ գէպի ԲԱԳՈՒՄ առաւօտեան 9 ժամ և 10 րոպէին։ Բ ա թ ու մ է հանում երեկոյեան 8 ժամ և 47 րոպէին։

Մ ա ռ դ ա տ ա ռ Ն 3 զննչքը դուրս է գալիս ԲԱԳՈՒՆԻՑ գէպի ԹԻՖԼԻՍ ցերեկայ 12 ժամ 20 րոպէին Թ Ե Ֆ Լ Ե Ս է հանում երեկոյեան 6 ժամ և 33 րոպէին։ Դուրս է գալիս ԹԻՖԼԻՍԻՑ գէպի ԲԱԳՈՒՄ առաւօտեան 7 ժամ 48 րոպէին։ Բ ա թ ու մ է հանում առաւօտեան 8 ժամ 28 րոպէին։

Մ ա ռ դ ա տ ա ռ Ն 2 զննչքը դուրս է գալիս ԲԱԳՈՒՄՆԻՑ գէպի ԹԻՖԼԻՍ առաւօտեան 8 ժամ 20 րոպէին Թ Ե Ֆ Լ Ե Ս է հանում երեկոյեան 8 ժամ 22 րոպէին։ ԹԻՖԼԻՍԻՑ գէպի ԲԱԳՈՒՄ է դուրս գալիս երեկոյեան 9 ժամ 5 րոպէին։ Բ ա թ ու մ է հանում ցերեկայ 12 ժամ 59 րոպէին։

Մարդատար Ն 4 զննչքը դուրս է գալիս ԲԱԳՈՒՄՆԻՑ գէպի ԹԻՖԼԻՍ երեկոյեան 8 ժամ 35 րոպէին Թ Ե Ֆ Լ Ե Ս է հանում առաւօտեան 9 ժամ 7 րոպէին։ ԹԻՖԼԻՍԻՑ գէպի ԲԱԳՈՒՄ է դուրս գալիս առաւօտեան 10 ժամ 57 րոպէին։ Բ ա թ ու մ է հանում առաւօտեան 5 ժամ 45 րոպէին։

ՍԱՅԵԱԹՆՈՎԱՅԻ

ԵՐԳԵՐԻ ԼԻԱԿԱՍԱՐ ԺՈՂՈՎԱԾՈՒՆ Թիֆլիսի բարբառով և Գէորգ Հալիբրեկեանի լեզուականութիւնով, Մ. 1852 թ. վաճառվում է փոխանակ նախկին 1 րուբլւ՝ 50 կոպէկով։

Դիմել ԹԻՖԼԻՍ՝ Կենսօրնական գրադաճաւանոց։ (ն.) 1—5

ԵՐԿՈՒ

ամսով գնալով Կարս, ինձ դիմողներին ինչպիսի էր մինչև հոկտեմբերի 1-ը, նամակներն ուղղել այդ քաղաքը։ 1—2 Տիգրան Յովհաննիսեան

Շտորակալութիւն ենք յայտնում հրապարակով այն բոլոր հեղինակներին, թարգմանիչներին, հրատարակիչներին և մասնաւոր անձանց, որոնք չը վազան օգնել Կերչի հայոց գրադարանի համար գրքեր հաւաքելու՝ նուիրելով մէկ կամ մի քանի օրինակ գրքեր։ Շարունակելով նուէրներ ընդունելութիւնը ինչպիսի էր յարգելի հեղինակներից և միւսներից, որ ուղարկեն և՛ այսուհետև նուէրներ իմ այս հասցեով. К е р ч ь, Учитель Ханоягу. 1—3

Մի պարսն ունի ԺՈՂՈՎԱԾՈՒ ԳՐԳԵՐԻ, —65 հատ գրքեր, 110 հատ քոչիւրներ և 210 հատ ամսագիրներ։ Բացի դրանից 19 տարվայ «Մշակ» լրագրի բոլոր համարները (1878 թ.ից մինչև 1896 թ.իւր). այս բոլորը ցանկանում է վաճառել։ Խնդրում է հայ հարուստներից, որ գնեն և ընծայեն Երուսաղէմի կամ Էջմիածնի կամ մի որ և է դաւառական գրադարանի։ Դրանով դնողները համ իրանց համար բարի յիշատակ կը թողնեն, համ էլ պարգոնին իր նեղ գրութիւնից կազատեն, որովհետև չառ ժամանակ անդործ մնալուց՝ չքաւորութեան մէջ է ընկել։ Հրատարակում է Բագուի Մարգարիտական ընկերութեան և Թիֆլիսի Բարեգործական ընկերութեան խորհրդի անդամների ուղարկութիւնը։ Գրքերի և բոլոր լրագրների ընդհանուր գինն է 300 րուբլ։ Դիմողներին կարելի է դիմում անել։ Պիտի դիմել այս հասցեով. ԹԻՖԼԻՍ, Երեւանի հրապարակ, Թամաշօվի բարձրասարայի դիմաց լիմոնադ ծախող Առաքել Խաչատուրեանցին։ 2—3

Վ Ե Ր Ի Ն - Ա Ղ Դ Ա Ն Ի
Եկեղեցական-ծխական գաղութի համար հարկաւոր է մի
ՏԷՆԶԱՒՈՐ ՈՒՍՈՒՑԻԶ
պայմաններին համար դիմել Գրադարանաւոր, Մեսրոպ Բաճանայ Եղեղեանցին։ 2—3

ՆԱՅԱՆՈՒՆՆԵՐ
Լ յ յ տ ե ն աւ
ԼԵՒՈՆ ԽԱՆ-ԱՂԱՆԻ
Գիւղատնտեսական գործիքներ եւ մեքենաներ
Բացառական բաւարարում և 250 նկարով։ Հրատարակութիւն Թիֆլիսի հայոց Հրատարակական ընկերութեան։
ԳԻՆԸ 50 ԿՈՊԷԿ.
Դիմել ԹԻՖԼԻՍ, Общество изданий армянск. книгъ. 38—40

Լ յ յ տ ե ն աւ
ՊԱՄԿԱԿԱՆ ՄՐՄՈՒՆԶՆԵՐ
Ժողովրդական երգերի ժողովածուն (երեքուրդ տպագրութեամբ)։
ԳԻՆԸ Է 60 ԿՈՊԷԿ
Հասցէն Александровск, учителю Армянск Брутянск, կամ Книжная торговля Александра Мхитаряна. 3—3

Լ Ո Յ Ս Տ Ե Ս Ա Ի

ԼԵՐ

Մ Է Լ Ի Ք Ի Ա Ղ Զ Ի Կ Ը

(Պատմական վէպ, 753 էրես)

Գինը 1 ՐՈՒԲ. 30 ԿՈՊԷԿ (սովեկազմ 2 րուբլի)

Ծախվում է ԹԻՖԼԻՍՈՒՄ—հեղինակի մօտ («Մշակ» խմբագրատանը) և Կենտրոնական գրադաճաւանոցում։ ԲԱԳՐՈՒՄ—պ. Երեւանի Գալիլեանցի մօտ, Ա. Ի. Աղամբովի գրադարանակ. ՇՈՒՇՈՒՄ—Բագրատ Տէր-Սահակեանցի գրադաճաւանոցում։

Հեղինակի հասցէն ԹԻՖԼԻՍ, редакция „Мшакъ“.

4—10

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱՐԲԱՆԱՄԵԱՆ

Հեղինակ Ձեռնարկի առեւտրական և գործարանական հաշուապահութեան ՌՍՈՒՅԱՆՈՒՄ Ե ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է

Երկու սեռի անձանց, 4 ամսայ ընթացքում հաշուապահութիւն գործնականապէս, երաշխաւորելով, և եղած դէպքերում յանձն է առնում պաշտօնի առաջարկելը։

ՊԱՐԱՊՄՈՒՐԻ ԱՌԱՐԿԱՆԵՐՆ ԵՆ

Ա) Կրկնակի խաղական հաշուապահութիւն ըստ ամենայն առեւտրական ճիւղերի, հանդերձ նախապէս արդիւնաբերական և կերտնիլի գործարանական հաշուառնութեան։

Բ) Առեւտրական թուաբանութիւն։

Գ) Առեւտրական նամակագրութիւն։

Դ) Դեղագրութիւն և ամենապատ ձեռքերի ուղղութիւն։

Պարագանդները սկսվում են սեպտեմբերի 15-ից, ճաշից յետոյ և պարբերաբար շաբաթը նակվելու են իւրաքանչիւր 2ՈՐՄ ամսից յետոյ. իսկ կիրակի օրերը լինելու են առանձին գործնական պարագանդները։

3ամիսայոցները թող դիմեն գրաւոր կամ անձամբ 3 ժամից մինչև 5 ժամ երեկոյեան, Ս Օ Լ Օ Լ Ա Կ, Սերգիեւիչայա փողոց, տուն Լիսիցեանի, № 20։

Վերադաճաւանոցութեան և կերտնիլի գործարանական հաշուառնութեան գրադաճաւանոցում և հեղինակի մօտ, և Ռուսաստանի բոլոր յայտնի գրադաճաւանոցներում։ ԳԻՆԸ Է 3 Ր. 50 ԿՈՊԷԿ։ Օտարաբարաբայները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պատիւ ծախս վճարելու։ (ն. ո.) 19—30

Ա. ՓՐԻԴՈՆԵԱՆ ԵՒ ԸՆԿ. ԳՐԱՍԵՆԵԱԿԸ

Ներքին փոխառութեան տոմսերն ապահովանքնու համար՝ մինչև նոր փոփոխութիւն անելը՝ վերցնում է.

1 Ր. 75 ԿՈՊԷԿ 2-րդ փոխառութեան տոմսին, առ 1-ն սեպտեմբերի 98 թ.ի։
1 Ր. 40 ԿՈՊԷԿ 3-րդ » » առ 1-ն նոյեմբերի 98 թ.ի
Բացի դրանից վերցնվում է 15 ԿՈՊ. գերբային տուրք։
Գրանցեալ տոմսերը չէ ապահովանքնում ոչ հեռազրով և ոչ վերադիր վճարով (չ. ո. ն.) 2—3

ՁԵԹԻ ԵՒ ՍԱՊՈՆԻ ԳՈՐԾԱՐԱՆ

Յ. ԹԱՅԻՐՕՎԻ ԵՒ Կ. ԱԼԻԽԱՆՕՎԻ

Վ. Ա. ՃԱՆՈՎՈՒՄ Է

2 ՈՒՒ ՍԱՊՈՆ

Հինգ զանազան մեծութեան, №№ 8, 13, 15, 18 և 24.

Դիմել ԿՈՎԱՍՏԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԴԵՂԱՐԱՐԱԿԱՆ ԱՊՐԱՆԳՆԵՐԻ ՎԱՃԱՌՄԱՆ. („Кавказское Товарищество Торговли Аптекарскими Товарами“) և բոլոր բախալէ մազալիներում։ Մեծ քանակ գնողներն նոյն իսկ գործարանի մէջ—Երեւանի շօսէ, սեփական տուն։ (ն. ո.) 12—12